

### ՃԶԳ.

Ստեփաննոս Լեհացոյ բառգրքին նկատմամբ, որուն շուրջ ասկէ առաջ ուրիշ նամակներ ալ գրադեցան, Հ. Գէորգ Պաղատտեան հետեւեալ նամակէն առաջ գրած է նոյն տարւոյ մարտ 20-ին առ Հ. Իգնատիոս այսպէս. «Ձտետրն բառգրքին բերի «և ետու Հ. Սիմոնին. և յոյժ հաւանեցան ամենեքեան. ուստի խնդրէ յեղբայրու. «Թենէդ զի եթէ հնար է ջանասցես ի ձեռս բերել զբոլոր բառգիրքն, կամ օրինաւ «կեկոյժ, և կամ գնելով. մեր Հ. Յովսէփն կարէ օրինակել: Չայսմանէ մեզ բարւոք «տեղեկութիւն տայցես մանրամասնաբար»: Իսկ ուրիշ տեղեակ վարդապետ մը վերորդրեալ նամակէն վերջ Մայիս 4-ին հետեւալը կը ծանօթագրէ. «Հ. կարապետն «մեր գրէ առ մեզ թէ բառգիրքն ստեփանեան է ստամպօլ, զոր առաքեալ են ի Լեւ «հաստանու տպագրել տալ ստամպօլ. ուստի որչափ կարէք ջանացէք ի ձեռն բերել «զայն» (Գրեալ առ Հ. Իգնատիոս):

Հետեւեալ վաւերաթղթէն պիտի իմանանք բառգրքին վիճակն ու զրական արժէքը:

Վ. Հ. Իգնատիոս Վյուր.ին մերում կրօնակից եղբոր  
բազում սիրով ողջոյն խնդաւետ ի քրիստոս յիսուս

... Ընկալեալ և զերկուս թուղթս ի բառգրքէն ստեփանոս վարդապետի կամենացացոյ զգրեալսն առ ի ձէնջ, յոյժ զարմացաք, զի ոչ կարծէաք. և թէպէտ գտանին ի նմա սխալանք, սակայն զհարդ և է լաւագոյն է քան զՎիլօթին, և մեզ ծառայէ վասն լատին բառգրքին, և յայլ պէտս. արդ՝ աղաչեմ զքեզ հ. պատուական, զի ջանասցիս ամենայն փութով ի ձեռս բերել զայդ բառգիրքն, եթէ գնելով, և եթէ օրինակելով դու, կամ հ. յովսէփն. այլ և տեղեկասցիս, միթէ բոլորն աւարտեալ է, թէ ոչ, կամ ո՞ր գտանի, և այլն. արդ՝ այսմ ամենայնի տեղեկացեալ ծանուցիք արքահօրն, զի ըստ այնմ հրաման տացէ առնել, որ ինչ պարտ է. այսմ թղթոյ զպատասխանին փութով յղեսջիր առ մեզ:...

Յամի տեան Թ. Զ. Ծ. Զ. [1756]  
ի մարտի ԻԲ

Անարժան ծառայ ւանպիտան  
Հ. Սիմոն վրդպ. Մխիթարեան

### ՃԶԴ.

Շարք մը ժամանակակից պատմական դէպքեր կը պարունակուին հետեւեալ վաւերաթղթին սէջ:

Գերապատիւ տեառն տեառն Ստեփաննոս վարդապետի և արքայ ձոր  
մերում բազում սիրով և կարօտիւ ողջոյն

... Եկն այսր ի կոտանդնուպօլսոյ այր ոմն յարգելի վաճառական հաճի արութենի որդի տէօլուէթ անուն. սա պատմեաց մեզ, թէ աղէքսանգր կաթուղիկոսն վախճանեալ. և ընտրեալ են զահագինն ի տեղի նորա. և զսարգիս վարդապետն ի տեղի ահագինին յառաջնորդութիւն իզմիրու:... Չնաշխարհիկ բերդն վարատինու ի վեր քան զմիտս և քան զբան ամրանայ: Արկին և զայլ հիմն նորոգ բերդի ի մեր կողմն, յոր աշխատին անհամար անձինք զձմեռն և զամառն ողջոյն: Արկանելոց են և զայլ նոր հիմն երրորդ բերդի ի մեծի կղզւոյ, որ է հանդէպ վարատինու, ուր են անտառք ուռեաց. և այս ի փառս փրկչին, յամրութիւն հոռովէական սուրբ եկեղեցւոյ, և ի պարծանս քրիստոսապը-